'ի Կոստանդինուպօլիս, խոյառ զրկել զՀայս 'ի ժառանգութենէ Ս. Տեղեաց, ամբաստան լեալ 'ի Դուռն առին հրովարտակ 'ի Սուլթան Սէլիմ երրորդէ հակառակ Հայոց ١٢١٦, որպէս թէ՝ Հայք տիրել կամեցեալ են տեղեաց և ժառանգութեանց նոցին, եւ առանց հրամանի կախեալ կանթեղս։ Եւ յետ այնորիկ համարձակութիւն գտեալ ձըգեցին 'ի կողմն իւրեանց զմեծամեծս Դրան, և սկսան որոնել զարձանագրութիւնս հին հրովարտակացն Հայոց։ Իմացեալ զխորամանկութիւնն Յունաց Չէլէպի քէօսէ քեահեայ Բէիզ էֆէնտի, ազդ արար լսելեայն բարեկամին իւրոյ հայկազն Սիւրենեան Մուրատ ամիրայի, ունել 'ի պատրաստի զհին և զհաստատուն հրովարտակս, որ և նա ծանոյց փոխանորդ Յակոբ եպիսկոպոսին, և անտի յԵրուսաղէմ։ Իսկ միաբանք Հայոց խաբեալ 'ի խորամանկութենէ Յունաց, ընկերացեալ էին նոցա հաւասար վճարել զքաղաքական տուրս և զայլ տուգանս. այլ 'ի հասանել գրոց փոխանորդին և այլոց 'ի կայսերանիստ քաղաքէ, զարթեան 'ի թմրութենէ որպէս 'ի քնոյ։ Յոյնք որ պահեալ էին ըզհրովարտակն զայն, 'ի սոյն աւուրս կոչեցին զդպրապետն դատարանի՝ եւտուն նմա արձանագրել զնա անդ 'ի տումարի։ Իսկ այրն գոլով բարեկամ Հայոց, հանեալ զպատճէն նորին կնքով դատաւորին՝ եբեր առ Պատրիարքն Հայոց, և նոցա ընթերցեալ, ծանեան զթակարթն, զի դիտաւորութիւն Յունաց ոչ միայն արտաքսել էր զՀայս 'ի Ս. Տեղեաց, այլ նաեւ յափշտակել 'ի ձեռաց նոցա զսեփհական վանօրայս, զՍ. Յակոբ և զայլս։

Թէոդորոս Պատրիարք 'ի լինել վճռին ընդ Յունաց սակս երից կանթեղաց, յառաջագոյն տուեալ էր նորոգել զհրովարտակն Ս. Աստուածածնի, որ 'ի սոյն ժամանակի յետս պահանջէր զայն Բէիզ էֆէնտին։ Զայն իմացեալ Յունաց առին և նոքա նոր հրովարտակ 'ի Սուլթան Մուստաֆայէ ١١١٨, յորում Յունաց սեփհականէ Արքայն ըզբովանդակ Ս. Տեղիս, և զհրովարտակս Հայոց խափանեալ, Յոյնք եւտուն ջնջել 'ի դիւանաց զարձանագրութիւնս Հայոց, եւ ինքեանց սեփհական համարէին զգերեզմանն Ս. Աստուածածնի և զեկեղեցին Բեթղեհէմի հանդերձ բանալեօք, եւ Հայք իբրեւ հպատակ տէրութեան՝ գնացեն